ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2018 թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 618-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը սահմանելու մասին» N 618-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կառավարությունը» բառերով.

2) որոշմամբ սահմանված կարգի՝

ա. 1-ին և 6-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետությունում» բառերով,

բ. 2-րդ կետում «վերջնաժամկետից հետո երկու ամիսը լրանալը» բառերը փոխարինել «վերջնաժամկետը» բառով,

գ. 3-րդ կետում «օրենքով» բառը փոխարինել «օրենսդրությամբ» բառով,

դ. 5-րդ կետի առաջին նախադասությունում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայտը ներկայացվում է մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմավորման իրացնելու համար «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված վերջնաժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև նշված ժամկետը կարող են կատարվել ճշգրտումներ՝ նոր հայտ ներկայացնելու եղանակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**